

ՏԱՐԵԿԱՆ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ Ս. ԹԱՐԻՄԱՆԶԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

31 Մայիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, Ժողովուրդային Վարժարանի հանդիսարանին մէջ կայացաւ Ս. Թարգմանչաց Մանկավարժի Ամսօրը՝ Հանգէսը, նախագահութեամբ Վարժարանի բազմամեայ և բարեջան Տեսուչ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գործիկեանի, Ներկայ էին Հոգշ. Հայրեր և բազմաթիւ ժողովուրդ:

Խնամքով պատրաստուած յայտագիրը կը բաղկանար երգերէ, հայկական պարերէ, արտասանութիւններէ և արամաիստութիւններէ, բոլորն ալ յաջողակէս կատարուած Մանկավարժի և Նախակրթարանի Ա. դասարանի փոքրիկներուն կողմէ: Երեք ժրջան Վարժուչիները ոչինչ խնայած էին Հանգէսի յաջողութեան համար:

Հանգէսի աւարտին, Տեսուչ Սրբազանը բաժնեց վկայականները Մաղիկ դասարանէն ընթացաւարտ 13 երկսեռ փոքրիկներուն և «Պահպանիչ»ով ու Տէրունական Աշօթքի երգեցողութեամբ փակեց հանդէսը:

Յաջորդ Կիրակի, 7 Յունիս, երեկոյեան ժամը 6 30ին, Սրբոց Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Երկրորդական բաժնի Ամսօրը՝ Հանգէսը, ղարձեալ նախագահութեամբ Վարժարանի Գերաշնորհ Տեսչին, Մնողքներ և հրաւիրեալներ լեցուցած էին սրահը զրեթէ ամբողջութեամբ:

Այս տարուան Հանգէսը նուիրուած էր մեր Պատմահօր՝ Մովսէս Խորենացիի, անոր մահուան 1500ամեակին առիթով: Շրջանաւարտ սաներ խօսեցան անոր կեանքին ու գործին մասին, կարեւոր յաջողութեամբ: Աշակերտները երգեցին հայրենական երգեր: Եղան նաեւ արտասանութիւններ, տաւնձին ու խմբական:

Հանգէսի երկրորդ բաժնին մէջ կատարուեցաւ բաշխուած վկայականներու և մրցանակներու: Տեսուչ Սրբազանը կարգաց մասեր իր Տեղեկագրէն: Երգուեցաւ, ըստ սովորութեան, Հրաժեշտի երգը, գաշն ու քաղցրահունչ: Շրջանաւարտներէն մին կարգաց խնամեալ ուղերձ մը, պահէն թելադրուած յուզականութեամբ յագեցուն: Գերշ. Տեսուչը իր փակման խօսքին մէջ յորդոր սեղոյից իրենց դասակները օտար վարժարան ղրկող ծնողքներուն, որ վերաբնակին իրենց կեցուածքը, քանի որ Թարգմանչացը օտարին տուածը ապով միտաին, կու տայ նաեւ հայադիտական դասեր, ա՛յնքան կենսական հայապահպանման մեր գոյապայքարին մէջ: Հանգիստութիւն մը նշմարելով Պենտեկոստէի օրը (այդ օր տօնն էր Հոգեգալստեան) առաքեալներուն ստացած Ս. Հոգիի շնորհքին և ընթացաւարտներուն մեր վարժարանէն ստացած հայեցի առողջ ոգեկանութեան միջև. յորդորեց այս վերջինները որ առաքեալներուն նախանձախնդրութեամբ լեցուած՝ ըլլան տարածիչներ այդ ոգեկանութեան, ուր որ ալ նեւէ գիրենք անգութ ճակատագիրը Հայուն:

Պատրիարք Հայր, որ իրեն Գահակալը Երուսաղէմի Աթոռին և պետր Ս. Յակոբեանց Միաբանութեան, գերագոյն տեսուչը, անօրինոյն ու հագառարն էք Սրբոց Թարգմանչաց Վարժարանին, լոյսի և յոյսի այս Տան, ուր կը դարբնուին մատուցալ հոգիները մեր գաղութի նորահաս սերունդին, որ պիտի ըլլայ մեր ժողովուրդին վաղը, ապագան: Շնորհակալութիւն նաեւ անոր համար, որ այս նուիրական գործին ղեկավարութիւնը վստահած էք մեզի:

Մեր Տեղեկագրին հետ Զեզ կը ներկայացնենք այստեղ տարւոյս մեր 6 շրջանաւարտները, որպէսզի անոնց վկայականներուն հետ շնորհէք նաեւ Զեր Հայրական օրհնութիւնները, որպէսզի անոնք ըլլան ծառաներ բարի և հաւատարիմ մեր ժողովուրդի ծառայութեան սուրբ սեղանին:

Եղբայրական փրժողիկն սիրով
խոնարհ աղօթակից
ԿԻՐԵՂ ԵՊՍ. ԳՈՐԺԻԿԵԱՆ
Տեսուչ Ս. Թ. Երկ. Վարժարանի